

---

---

**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ  
«ՍԱՄՆԱ ԾՈՒԵՐ» ՀԵՐՈՍԱՎԵՊԻՆ**

2003 թ. Ծաղկաձորում տեղի էր ունեցել հայ ժողովրդական «Մասնա ծներ» հե-  
րոսավեպին նվիրված միջազգային գիտաժողով, որն անցկացվել էր ՅՈՒՆԵՍԿՕ-  
ի հովանու ներքո, համատեղ նախաձեռնությանը ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան  
գրականության և հնագիտության ու ազգագրության ինստիտուտների: Հրավիր-  
վել էին նաև մասնագետներ մերձավոր ու հեռավոր արտասահմանից: Նախա-  
դեպն ուսանելի էր, և կազմակերպիչները մտադրվեցին շարունակական դարձնել  
այն: Եվ ահա երկուսուկես տարի անց հրավիրվեց հայկական էպոսին նվիրված  
արդեն երկրորդ միջազգային գիտաժողովը, որը տեղի ունեցավ հունիսի 23-24-ին՝  
Երևանում և Ծաղկաձորում: Այս գիտաժողովը նախորդից ավելի ընդգրկուն էր և՛  
թեմաների բազմազանությամբ ու գիտական հարցադրումների խորությամբ, և՛  
մասնակիցների երկրների աշխարհագրությամբ:

Գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ, ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրա-  
կանության ինստիտուտի տնօրեն Ազատ Եղիազարյանի՝ բացման խոսքին հա-  
ջորդեցին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի ողջույնի ուղերձն ու ՀՀ ԳԱԱ  
նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի ողջույնի խոսքը:

Գիտաժողովի առաջին զեկուցողն անվանի բանագետ և էպոսագետ, ՀՀ ԳԱԱ  
թղթակից անդամ Սարգիս Հարությունյանն էր՝ «Պատմական և առասպելաբա-  
նական ավանդությունների զուգորդումը «Մասնա ծներում» թեմայով: Զեկուցման  
մեջ դիտարկվում է էպոսի հնագույն վիպական տարրերի՝ առաջին ճյուղի պատ-  
մական և առասպելաբանական մոտիվների զուգորդումը, պատմական շերտի ա-  
ռանձնացումը: Վեպի առաջին ճյուղի հիմքում ընկած է մի պատմական իրողությ-  
յուն, ըստ որի Ք. ա VII դարում Ասորեստանի արքա Մինասիերիբին (հայ. Սենե-  
քերիմ) տաճարում աղոթելիս սպանում են իր որդիներ Ադրամելեքն ու Սարա-  
սարը և փախչում Արարատի երկիր: Պատմական այս անցքն արձագանքվել է  
նաև Աստվածաշնչում: Մ. Խորենացին V դարում, շարունակելով այդ գրույցը,  
գրում է, որ Սենեքերիմի որդիներին հայերի նախնի Սկայորդին բնակեցնում է  
մեր աշխարհի հարավարևմտյան կողմում, և որ նրա սերունդները լցնում են Սիմ-  
լեռը, և որ նրանցից են ծագում Գնունիներն ու Արծրունիները: Այսպիսով, հնուր-  
յամբ մ. թ. ա. VII դարին հասնող պատմական դեպքերը վիպականացվել են,  
կապվել երկվորյակների առասպելին, այսինքն՝ առասպելականացել, ապա ավե-  
լի ուշ Խորենացու ժամանակներում հայկական տոհմերի հիմնադրման պատ-  
մության հետ կապվելով՝ հայկականացել, վերստին պատմականացել և ներառ-  
վել վեպի հյուսվածքի մեջ: Ե՛վ առասպելի, և՛ պատմության մեջ ճշտորեն հա-

մրնկնում են տեղանուններն ու հերոսների անունները՝ Սանասար, Ասորեստան, Մենքերիմ, Երուսաղեմ, ինչպես նաև անցքերի հաջորդականությունը:

Հետաքրքիր գեկուցումներով հանդես եկան նաև գիտաժողովի հյուրերը, որոնցից ոմանց համար հենց այս գիտաժողովն էր առիթ հանդիսացել ծանոթանալու հայկական էպոսին: Եվ այս փաստը ցույց է տալիս, որ նման գիտաժողովներն օգնում են մեր ազգային հոգևոր արժեքները, տվյալ դեպքում՝ հայկական էպոսն ավելի ծանոթ դարձնել օտարներին, գրավել տարբեր ազգերի էպոսագետների ու բանագետների ուշադրությունը: Դոկտոր Քազազին (Իրան) իր ելույթում նույնիսկ խոստովանեց, որ հայերն ավելի լավ են ծանոթ պարսկական «Շահնամեին», քան իրենք՝ «Սասունցի Դավիթին»: Հյուրերն իրենց գեկուցումներում հիմնականում ներկայացնում էին իրենց հայրենի և հայկական հերոսավեպի զուգահեռները: Այդ առումով, «Սասունցի Դավիթը» մերձ առնչություններ ունի հատկապես իրանական էպոսի հետ, հանգամանք, որ հաճախ է նշվել հայ էպոսագետների աշխատություններում: Քազազին, համեմատելով իրանական և հայկական էպոսները, բավական խոր նմանություններ էր տեսնում դրանցում և՛ էպիկական զանազան մոտիվներում, և՛ հերոսների բարոյական, մարդկային նկարագիրների ընդհանրություններում: Հայ և պարսիկ ժողովուրդները դարեր շարունակ կողք կողքի ապրելով, տևական շփումների մեջ լինելով, թեև կրոնական ու մշակութային տարբեր համակարգեր են ներկայացնում, բայց ունեն փոխազդեցությունների ամենալայն ու բազմաթիվ դրսևորումներ, որոնց ամենացայտուն օրինակներից են երկու ժողովուրդների վիպական ստեղծագործությունները:

Հայկական և նարտական էպոսների զուգահեռների քննությամբ հանդես եկավ մոսկվաբնակ Տանգիլա Հաջիևան իր «Սասնա ծռերը» և նարտական էպոսը» գեկուցման մեջ: Վերջին շրջանում հայ բանագետները հաճախ են զբաղվել նարտական էպոսի ու մեր վիպական ստեղծագործությունների առնչությունների բացահայտմամբ և այժմ էլ արխագ գիտնականը, ծանոթանալով «Սասունցի Դավիթին», ինքն էլ անակնկալի էր եկել՝ հայտնաբերելով բազմաթիվ ընդհանրություններ վիպական այդ երկու ստեղծագործություններում, որոնց քննությունը դեռ նորանոր գիտական բացահայտումների հնարավորություններ կրնձեռի:

Գիտաժողովում հետաքրքրական գեկուցմամբ հանդես եկավ Աբխազիայի ԳԱ թղթակից անդամ Զուրաբ Զապուան՝ «Կրակ ստանալու մասին նարտական էպոսի արխագական պոեմի սեմանտիկան» թեմայով: Առհասարակ մարդկությանը կրակ բերողը մշակութաստեղծ հերոսի հնագույն տիպին է պատկանում, և նրա կերպարի զանազան դրսևորումները պահպանվել են տարբեր ժանրերի բանահյուսական նմուշներում: Նարտական էպոսի արխագական պոեմում Սոսրուկոն երկնքից աստղ է խփում, որ կրակ վառի. այս պատկերը դիցաբանական ամենախոր շերտերն է կրում իր մեջ: Էպոսներում, ինչպես նաև հեքիաթներում հաճախ է հանդիպում հերոսի՝ դևերից կրակ բերելու պոեմն, որտեղ դևերը՝ ընդերկրյա ուժերի կրողներն են, կրակի տերերն ու պահապանները, ինչպես նաև կրակը կլանողները, որոնց հաղթելով՝ հերոսը մարդկանց ապահովում է կրակով:

Այս հերոսի մի տարբերակն է նաև կովկասյան տարածքի ժողովուրդների, նաև միջերկրածովյան շատ երկրներում տարածված՝ ժայռին գամված կամ ժայռի մեջ փակված հերոսի՝ հայկական Փոքր Մհերի տիպի կերպարների շարքը, որոնցից մի քանիսին, անկախ իրարից, անդրադարձել էին գիտաժողովի օտարերկրյա հյուրերը: Արխագիայի ԳԱ ակադեմիկոս Շոթա Սալակայան զուգահեռներ էր տարել հայկական և արխագական էպիկական հերոսների միջև իր «Հողի տակ փակված հերոսի կերպարը հայկական և արխագական էպիկական ստեղծագործության մեջ» թեմայով զեկուցման մեջ: Մինչդեռ Մերքիայից ժամանած ազգագրագետ Ռադովան Տոմաշևիչը ուրվագծել էր նման զուգահեռներ հայկական և սերբական վիպական ստեղծագործություններում՝ «Քնած հերոսներ Մհերը և Մարկոն: Զուգահեռներ հայկական և սերբական էպոսների միջև»: Կրակ բերող, կրակ մարմնավորող՝ դիցաբանական ակունքներից սերած այս հերոսները հետազայում աստվածամարտության, աշխարհում գործող չարիքների դեմ կովելու այլազան, ավելի ազգային-պատմական երանգներ են ստանում և մարմնավորում տվյալ ժողովրդի՝ ապագայից ունեցած սպասումներն ու հույսերը:

Ամերիկացի հայագետ, Լոս Անջելեսի համալսարանի «Գրիգոր Նարեկացի» կենտրոնի ղեկավար, պրոֆեսոր Պիտեր Քաուիի՝ «Մյուժեի էվոյուցիան Սասնա էպոսում իբրև բանավոր փոխանցման միջոց» վերնագրով զեկուցման մեջ, ուսումնասիրելով հայ ժողովրդի պատմական զարգացման ընթացքի տարբեր փուլերում դրսևորված մշակութային, տնտեսական, պատմական, հասարակական երևույթներն ու եղելությունները, փորձել էր բացահայտել էպոսի մեջ դրանց հայտնվելու ժամանակաշրջանը: Էպոսի ձևավորումը, հիմնականում ընթանալով IX–XIII դդ., իր մեջ և՛ խորին հնության շերտեր է պարունակում (հիմնականում առասպելաբանական մակարդակում), և՛ ավելի ուշ շրջաններում ի հայտ եկած նյութական ու հասարակական կյանքի և մշակույթի իրողություններ, որոնք ասացողները «ներմուծել» են էպոսի պատումներում՝ ըստ իրենց ճաշակի ու ճանաչողական մակարդակի:

Ուշագրավ է, որ այժմեական հարցադրումներ էր շոշափում փիլիսոփայության թեկնածու, դիվանագետ Աշոտ Ոսկանյանի «Մյուժեի արդիականությունը: Հայկական էպոսի «Մհեր Փոքր» ճյուղի մի տարբերակի մասին» ուշագրավ զեկուցումը, որում ներկայացվել էր նույն հեղինակի «Homo tricster» էսսեից Փոքր Մհերի ճյուղին առնչվող մտորումները: Հեղինակը կենտրոնացել էր 4-րդ ճյուղի այն դրվագների վրա, որոնց հիման վրա առաջ են եկել Մհերի պատկերացումները «խուսափող» թշնամու և «դալբացած» հողի մասին: Այս դիցույթները, ըստ հեղինակի, արտացոլում են Մհերի սոցիալական ինտեգրման տապալումը, նրա սոցիումի քայքայումը: Փորձ էր արվել վավերացնել այդ մեկնությունը՝ համեմատելով Հ. Մաթևոսյանի «Ես ես եմ» խտացման (էսսեի) մեջ արտահայտված համանման գաղափարների հետ:

Ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու Լևոն Աբրահամյանը «Հերոսն առանց մանկության և մանկությունից անբաժան հերոսը» թեմայով զեկուցման մեջ էպիկական և առասպելաբանական հերոսներին բաժանում է երկու

տիպի՝ ըստ այն բանի, թե ինչպես է անցնում մանկությունը. հերոսներ, որ մանկություն չունեն, ծնվում են միանգամից հասունացած (Հիսուս), մորուքով (Վահագն) կամ այն հերոսները, որ այնքան արագ են մեծանում, որ կարծես գրկված են մանկությունից: Մյուս խումբն այն հերոսներն են, որոնք այդպես էլ դուրս չեն գալիս մանկությունից. նույնիսկ հսկա լինելով՝ մնում են մանուկ: Այդ կերպարներից են Մասնա հերոսներից ոմանք, հատկապես Դավիթը, որի մեջ «ծուռ» գաղափարը սերտ կապված է մանկական ծողայան, անմտության հետ: Այս տիպն ունի այլ ենթատիպ՝ մանուկ հերոսների կերպարանքով մարմնավորված դուրսագույններ ու աստվածներ, որոնք մանկական դիմակի տակ հասուն գծեր են քողարկում: Այս տեսակի կերպարներից են Կրիշնան, բուրյաթ-մոնղոլական Գեսերը:

Բանասիրության դոկտոր Արմեն Պետրոսյանի «Հայ-հնդկական վիպական գուգահեռները» վերնագրով զեկուցման մեջ քննվում էին տարբեր գիտնականների կողմից բացահայտված՝ «Մասնա ծուռ» էպոսի և հնդկական «Ռամայանա» և «Մահաբհարատա» էպոսների, ինչպես նաև Ռիգվեդայի վիպական և առասպելական մի շարք մոտիվների ու անունների ընդհանրությունները: Մանասարը, իբրև ամպրոպային հերոս և երկվորյակ, համապատասխանում է հնդկական Բնդրա աստծուն՝ նույնպես երկվորյակ և ամպրոպային աստված: Եվ կամ՝ Մանասարը և Բադդասարը ծնվում են իրենց մոր խմած՝ Կաթնաղբյուրի մեկուկես բուռ ջրից, իսկ հնդկական Ռաման և եղբայրները՝ իրենց մայրերի խմած 1/2 հարաբերությամբ կաթնային խմիչքից: Մակայն առավել հետաքրքրական են անվանական գուգահեռները: Մի տարբերակում հայկական երկվորյակների մայրն է Մառանը, որը հղիանում է ձիու ոտնահետքի ջրից, իսկ հնդկական երկվորյակների մայր Մառանյուն հղիանում է ձիու կերպարանք ընդունած ամուսնուց: Կան մի շարք համադրելի դրվագներ հայոց Արամ նահապետի և հնդկական Ռամա անունով հերոսի միջև: Այս ընդհանրությունները բացատրվում են ոչ միայն տիպարանորեն և ընդհանուր հնդեվրոպական ժառանգությամբ, այլև՝ պատմական շփումների արդյունք լինելով:

Մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանն անչափ ոգևորված է եղել մեր էպոսով և մասնավորապես Փոքր Մհերի ճյուղով, գրել է մի քանի գործեր նվիրված հայ հերոսավեպին, դրանցից են «Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին», խորհմաստ հոդվածը: Նա բանաստեղծական մշակման է ենթարկել Փոքր Մհերի ճյուղը «Մասնա Մհեր» պոեմում: Այդ կերպարն է նրան ներշնչել գրելու նաև «Մասնա մանուկ» պոեմը: Ահա այս հարցերին էր նվիրված բանասիրության դոկտոր Ավիկ Իսահակյանի «Իսահակյանը և էպոսը» զեկուցումը:

Բանասիրության թեկնածու, լեզվաբան Հովհաննես Զաքարյանի «Բանաձևային արտահայտությունները «Մասնա ծուռում» զեկուցումը նվիրված էր հերոսավեպի վիպական և ընդհանրական խոսքային բանաձևերի քննությանը: Հիմնական եզրահանգումն այն էր, որ մեր էպոսը, եթե վիպական բանաձևերի առումով գուսպ է, ապա ընդհանրական բանաձևերով հարուստ է և բազմազան:

Բանասիրության դոկտոր Աելիտա Դոլուխանյանը «Ֆրեդերիկ Ֆեյդին «Մասունցի Դավիթ» էպոսի թարգմանիչ և մեկնաբան» գեկուցման մեջ արժևորեց մեծանուն հայագետի կատարածը՝ ներկայացնելով հետաքրքրաշարժ մանրամասներ՝ կապված այդ տնական ու բարդ աշխատանքի հետ:

Բանասիրության թեկնածու Մագդա Ջանփոլադյանի «Մասնա ծներ» էպոսը ռուսական քննադատության գնահատմամբ (30–80 ական թթ.)» գեկուցման մեջ հիշատակվեցին անվանի ռուս բանաստեղծների, գրական քննադատների բարձր գնահատականները «Մասունցի Դավիթ» էպոսի մասին՝ համարելով այն լավագույններից մեկն աշխարհի էպոսների շարքում:

Բանասիրության թեկնածու Մարգիս Մխիթարյանը «Մուրբ անտառների հիմնումը՝ որպես նվիրապետական գործառույթ» գեկուցման մեջ անդրադարձավ տարբեր ժամանակներում սրբավայրերում անտառների հիմնմանը, որոնց նպատակն է եղել բավարարել հայ մարդու կրոնական զգացմունքները: Ցանկապատված սրբավայրը դիտվում էր իբրև տիեզերքի մոդել, խորհրդանիշ, կենդանիների որսն այնտեղ՝ ծիսակարգ և զոհաբերություն, սպանված կենդանիների կենսաէներգիայի փոխանցում տիեզերքին: Հայկական էպոսում այդպիսի օրինակ է Մեծ Մհերի կողմից Մարաթուկում Ռոսասարի հիմնումն ու պարսպապատումը:

Բանագետ Եվա Զաքարյանը «Խոր Մանուկ-Պարոն Աստղիկ գույզը «Մասնա ծներ»-ում» գեկուցման մեջ անդրադարձավ վեպում հիմնական դերակատարում չունեցող, առեղծվածային և քիչ ուսումնասիրված այս երկու կերպարներին՝ ներկայացնելով նրանց իբրև երկվորյակային բնույթ ունեցող, միմյանց հակադիր և փոխկապված՝ միաժամանակ նշելով նրանց առասպելաբանական կապը ամբողջային և արևային առասպելաշարերի հետ:

Ուրախալի էր այն փաստը, որ էպոսը գրվում է նաև երիտասարդ հետազոտողների ուշադրությունը: Դրա հավաստումն էին երիտասարդ գիտնականների երեք գեկուցումները, որոնք հաճախ վիճելի, սակայն համարձակ, նորարարական դրույթներ ու հարցադրումներ էին պարունակում: Գրականագետ Հայկ Համբարձումյանը «Մասնա ծներ» էպոսի կերպարային համակարգի որոշ առանձնահատկություններ» գեկուցման մեջ բացահայտում էր էպոսի կերպարների էվոլյուցիան՝ աստվածայինից առասպելականի, ապա հերոսականի: Ազգագրագետ Զորիկ Ծառուկյանի «Ջուրը որպես տոտեմ նախնի «Մասնա ծներ» էպոսում» գեկուցումը նվիրված էր ջրի՝ որպես տոտեմ նախնու պաշտամունքի դրսևորումներին, նկատի ունենալով ջրից կույս աղջկա հղիացման փաստը: Բանասիրության թեկնածու Սիրանուշ Դվոյանը նորովի, անհատական մտորումների տեսանկյունից էր փորձում ներկայացնել առասպել-վեպ-էպոս կապն ու փոխհարաբերությունը «Առասպելի, վեպի, էպոսի առիթով» գեկուցման մեջ:

Գիտաժողովի ամփոփման հեղինակավոր խոսքը վերապահված էր Մարգիս Հարությունյանին: Նա նշեց, որ միջազգային գիտաժողովները լավագույն առիթն են տարբեր երկրների գիտնականների փոխադարձ շփման, մտքեր փոխանակելու, իրենց երկրների գիտական միտքը միմյանց հաղորդելու, իրար ավելի լավ ճանաչելու: Այդ առումով, այս երկրորդ միջազգային գիտաժողովը գերազանցեց

նախորդին էթնիկական և աշխարհագրական ընդգրկման լայնությամբ: Նույն մակարդակի վրա դրվեցին հայ վիպական ավանդության գլուխգործոց «Սասնա ծռերը» սերբական, կովկասյան էպոսների և իրանական «Շահնամեի» հետ: Եվ այդ գուգահեռները ցույց են տալիս, որ աշխարհի լավագույն վիպական ավանդույթները ներառված են մեր էպոսում: Գիտաժողովը հաջող էր նաև գիտական հարցադրումների բազմազանության ու խորության տեսանկյունից: Իսկ արդյունքը հետո պիտի երևա՝ ծնունդ տալով նոր մտքերի ու ծրագրերի:

Հաջորդ օրը գիտաժողովի մասնակիցները, հյուրերը Աշտարակի գեղատեսիլ ձորում առիթ ունեցան վայելելու էպոսին ծնունդ տված բնիկ ժողովրդի՝ սասունցիների կենդանի ներկայությունը, նրանց խոսքն ու զրույցը, ջերմ ու հուզիչ հյուրընկալությունը, խոլ ու խենթ երգն ու պարը, և այդ խորապես տպավորիչ օրը վկայությունն էր այն բանի, որ հայկական էպոսը կենդանի է, ապրում է իր իսկ ստեղծող ժողովրդի հոգեկան կերտվածքում, ազգային նկարագրում՝ մարմնավորելով ապագայի հանդեպ նրա ունեցած ակնկալիքներն ու երազանքները:

ԵՎԱ ԶԱՔԱՐՅԱՆ